ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
Առողջապահության նախարարության և
Հայաստանի ամերիկյան համալսարանի միջև
Հանրային Առողջապահություն բնագավառում
ծրագրային, ակադեմիական և ուսումնական համագործակցության
հանձնախումբ ստեղծելու մասին

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը ի դեմս նախարար՝ Արա Բաբլոյանի մի կողմից և Հայաստանի ամերիկյան համալսարանը, ի դեմս ՀԱՀ-ի նախագահ՝ Միհրան Աղբաբյանի, մյուս կողմից (այսուհետև անվանվում են Կողմեր), առաջնորդվելով առողջապահության առաջընթացի բարձր գաղափարներով, ցանկանալով իրենց ավանդը ներ դնել Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգի զարգացման գործում, արտահայտում են իրենց ձգտումը մշակելու համատեղ ծրագրեր և համագործակցելու գիտության ու կրթության բնագավառներում:

Երկու կողմերի համագործակցության աշխատանքների կազմակերպման համար ստեղծվում է միացյալ հանձնախումբ, որի նպատակներն են.

1. Համակարգել հարաբերությունները ՀԱՀ-ի առողջապահական ծրագրի և ՀՀ առողջապահության նախարարության միջև:
2. Օժանդակել թեկնածուների ընտրության, արժեքավորման և ընդունման աշխատանքներին:
3. Դյուրացնել ծրագրի ուսանողների գործնական փորձառության աշխատանքները նախարարության ներսում և համակարգի մյուս հաստատություններում:
4. Ազգային Առողջապահության ինստիտուտի հետ կազմակերպել վերապատրաստման ծրագիր:
5. Օժանդակել շրջանավարտների աշխատանքի ապահովմանը՝ ըստ մասնագիտությունների:
6. Ըստ մարդուժի պատրաստվածության ուղեգծի կատարել մասնագիտական ծրագրերի ընտրությունները:

7. Ապահովել նախարարության փորձն ու պաշտոնյաների մասնակցությունը ակադեմիական ծրագրում:

Հանձնախումբը տարեկան կգումարի երկու ժողով, իսկ պահանջի դեպքում նաև՝ մասնահատուկ ժողովներ:

Հանձնախմբի կազմում են՝

Նախարարի առաջին տեղակալ (նախագահ) պարոն Դերենիկ Դումանյան,
Առողջապահության փոխնախարար, ՀՀ գլխավոր պետական սանիտարական բժիշկ պարոն Արարատ Մկրտչյան,
Բուժկանխարգելիչ օգնության և կադրերի վարչության պետ պարոն Գագիկ Սայադյան,
Ազգային Առողջապահության ինստիտուտի փոխտնօրեն պարոն Սամվել Հովհաննիսյան,
Հետվերականգնողական վնասվածքային կենտրոնի տնօրեն պարոն Միհրան Նազարեթյան,
ՀԱՀ-ի Հանրային Առողջապահության ծրագրի կոորդինատոր Հարություն Արմենյան,
ՀԱՀ-ի Հատուկ դասընթացների ծրագրի տնօրեն Սոնա Համալյան,
ՀԱՀ-ի Հանրային Առողջապահության ծրագրի ուսուցչական կազմից մեկ անդամ:

ՀԱՀ-Ի ՆԱԽԱԳԱՀ	ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՄԻՀՐԱՆ ԱՂԲԱԲՅԱՆ	ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

ԱՄՍԱԹԻՎ

ք. ԵՐԵՎԱՆ